

ՄԱՍԿ

Տարեկան դիմ 10 բուր, կես տարվանը 6 բուր:
Առանձին համարները 5 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյանի նմանությունները մեջ:

Օտարաբարությունը դիմում են ուղղակի
Тифлис. Редакция «Маск»

Խմբագրությունը բաց է առաջին 10—2 ժամ:

(Բացի կիրակի և տոն օրերից):

Ցայտարարությունը ընդունվում է ամեն լեզուով:

Ցայտարարությունների համար վճարում են
խրատանիքը ըստ 2 կոպեկի:

ԲՈՎԱՆԻՍՏԻԹԻՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ, Նամակ Մոսկվայից:
Նամակ խմբագրին: Ներքին լուրեր: ԱՐՏԱՔԻՆ
ՏԵՍՈՒԹԻՆ: Փառաքանական տեսություն: Ամբի-
կա: Գերմանիա: Ֆրանսիա: Իտալիա: Թուրքիա:
Արտաքին լուրեր: — ՀԵՌԱՐԻՆԵՐ: — ՅԱՅՏԱ-
ՐԱՐՈՒԹԻՆՆԵՐ: — ԲԱՆԱՍՏԻՐԱՎԱՆ, Դաւիթ
Բէկ:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ

ՆԱՄԱԿ ՄՈՍԿՎԱՅԻՑ

Մարտի 1-ին

Դեռ անցեալ տարի «Մշակ» մէջ մենք միջոց
ունեցանք մի երկու խօսք ասել լ ա զ ա ր և ա ն
ճ և մ ա ր ա ն ի ընտանեկան երեկոյի, աշակեր-
տական մզկիթայացման առթիւ: Ի միջի այլոց՝
մենք ուղարկուեցինք դարձնում ն ե ր կ ա-
յ ա գ ու մ ն ե ր ի և պ ա ր ա ն ա ղ է ս ն ե ր ի
վ ր ա, համարելով նրանց ամենակարեւոր դուար-
ճութեան միջոցներ այնպիսի ուսումնարանի
համար, որի աշակերտների մեծ մասը պանդուխտ
լինելով և համարեա ամբողջ տարի չորս պատի
մէջ մնալով—զուրկ է օր և է հանդիսից, որ և
է զուարճութիւնից: Եւ այս հանդէսները մասնա-
ւանդ անհրաժեշտ էինք համարում աշակերտ-
ների դաստիարակութեան համար, որ զանազան
ներկայացումներով ու պարահանդէսներով կա-
րելի է դրաւել ղէպի ճեմարան հասարակութիւնը
և դրանով արեւմտիկ աշակերտների մէջ այն բա-
րեբար ազդեցութիւնը, որ առհասարակ ընտա-
նիքը կարող է ունենալ ուսումնարանի վրա:
դաստիարակութեան գործը անպատճառ պէտք է
բաժանվի ու ս ու ս մ ա ր ա ն ի և հ ա ս ա ր ա-
կ ու թ և ա ն մ է ջ:

Յայտնի է որ անցեալ միևնույն (Տօլստոյ)

ԴԱՍԻԹ ԲԵԿ

Պ Ա Տ Մ Ա Կ Ա Ն Վ Է Պ

(1722—1728)

Ժ.

Կէսօրից բաւական անցել էր արդէն: Ծառերի
տուփերը դարձել էին ղէպի արեւելք: Սիկոն,
մեծ պարտիկ հովտապետը, իր երկայն ցուպը
նիցով տուած նոյնպէս երկայն իրանին, անշարժ
արձանի նման կանգնել էր մի բարձրաւանդակի
վրա և այնտեղից արժուի աչքերով նայում էր
ղէպի հեռուն, ուր ուխտաւորների բազմութիւնը
դեռ ամբողջում էր, դեռ խլրտում էր մասու-
ռի շուրջը: Կարծես, այդ հեռաւորութիւնից նա
որոշում էր բոլոր անձնաւորութիւնները, ճա-
նաչում էր բոլոր երևանները, ամեն մէկի հետ խո-
սում էր, և ամենին ողջունում էր, ասելով. «ո-
ղորմած կենայ»: Այդ բարեպաշտական տեսա-
րանը այն աստիճան հրաւել էր ջերմեանից հո-
վաւին, որ նա ամենին չէր նկատում իր սի-
րելի ուղեւորներին, որոնք նրա շուրջը սփռված,
մեծ անորոշակով արածում էին: Նա տեսաւ մէ-
կին, որ ձորի միջով անցնում էր:

—Դաւիթ, Դաւիթ, գոչեց նա այնպիսի մի-
ձգական ձայնով, կարծես, նրա ձայնը հաղորա-
ւոր հնչիւնների բաժանվելով, մինը միւսին առաջ
մղեցին և հասան մինչև Դաւիթ ականջները, որ
բաւական հեռաւորութեան վրա, ձորի միջով դը-
նում էր:

Նա դարձաւ ղէպի կողմը ձայնը և տեսաւ հո-
վտապետին բարձրաւանդակի վրա կանգնած:
Մի քանի վայրկեան մնաց իր տեղում անշարժ,
զօտարանում էր վճռել, արդեօք զնալ նրա մօտ

սխտեմն էր՝ ի միջի այլոց՝ և զիմադրօնների
խտարարոյ—կլաւիքական կենցաղավարութիւ-
նը. և թէպէտ երբեմն թոյլ էր տրվում աշա-
կերտներին զուարճութիւն— ներկայացումներ,
բայց այդ ներկայացումները կարող էին լինել
միայն կլաւիքական լեզուներով. այս conditio
sine qua non էր: Եւ երեկոյան մեծ մեծ հո-
ղեկան բաւականութիւն էր ստանում աշակերտը
(մասնաւոր փոքրը)՝ լսելով Սոֆիկոյ, Եւրիպիդի,
Պլատոնի կամ Տէրէնցիի անվերջանալի եամբերը,
տրոխէյները ու հեղաձեռները, որոնցից նա
ամբողջ երեկոյ 5 խօսք էր հասկանում.....

Ինչպէս երեւում է՝ ներկայ լուսաւորութեան
միևնույնը աւելի պարզ է նայում կրթութեան
գործի վրա. ուստի սրա ժամանակ զիմադրօնի
խտարարոյ-ճգնաւորական կեանքը մի փոքր
մեղմացաւ, թեթեւացաւ:

Բարեկենդանի հինգշաբթի օրը (19-ին փետր.)
Ղազարեան ճեմարանի դահլիճներում մեծ պա-
րահանդէս էր: Ժամը 8-ին երեկոյան սկսան
հաւաքվիլ հիւրերը. նրանց ընդունում էին վերին
դասարանների աշակերտները և հրաւիրում դահ-
լիճ: Երբ հիւրերը բաւականին ժողովեցան, դի-
նոսորական երաժշտութիւնը հնչեց «Боже царя
храни» (այդ օրը կայսեր զահակալութեան օրն
էր) և աշակերտների երգեցիկ խումբը ներդաշնակ
կերպով երգեց այդ նուագը: Այնուհետև սկսվեց
պարահանդէսը: Մեծ տոն էր այդ օրը աշակերտ-
ների համար. 15 տարեց աւելի է, որ օրիշտորի
ձայնը չէր թնդացրել ճեմարանի դահլիճները. հա-
պա ինչ ուրախութիւն, ինչ բաւականութիւն էր
երևում աշակերտների երեսին... Պարահանդէսը
շատ չընդ էր ամենայն պարագաներով. դահլիճ-
ները և նախասենեակները զարդարված էին
մեծ աշտանակներով. լուսաւորութիւնը շատ փա-
ռաւոր էր. դաստիարակում փռած էին գորգեր
և դրած էին հարկաւոր կահ-կարասիք: Պատերից
կախված էին մեծադիր պատկերներ. սրանց մի
քանիսի ճակատը զարդարած էր դաւար պսակ-

թէ շարունակել իր ճանապարհը, որի որ կողմ
տանելը ինքն էլ չը գիտէր: Նա ուղղեց իր քայ-
լերը ղէպի հովտապետը:

—Ո՞րտեղ ես սատանայի նման կորել այսօր,
չես երեւում, հարցրեց Սիկոն իր սովորական
քնքշութեամբ:— առաւօտից ես քեզ չեմ տեսել:
Բայց Դաւիթ վրդովված սրտին, նոյն բողբոջում
հապիւթ էին որ և իցէ ուրախութիւն
պատճառել իր բարեկամի քնքշութիւնները. նա
ոչինչ չը պատասխանեց:

—Հասկանում եմ... շարունակեց հովտապետը
խորհրդաւոր ձայնով:—գնացել էիր արջիկներին
մտիկ տալու, հա... հասկանում եմ... ես էլ քո
հասակում աղջիկներից պոկ չէի գալիս:

—Ես ոչ մի տեղ չեմ գնացել, պատասխանեց
պատանին, և նստեց մի քարի վրա, այժմ միայն
զգալով, որ սաստիկ յոգնած է:

Հովտապետը նոյնպէս նստեց նրա մօտ նոյն
քարի վրա:

—Ի՞նչպէս ոչ մի տեղ չես գնացել, հարցրեց
նա, —միթէ դու չը գնացիր համբուրելու:

—Չը գնացի, պատասխանեց պատանին անու-
շաղիկ կերպով և սկսեց նայել բազմաթիւ կար-
միր պողոճներին վրա, որոնց սև բծերը աւելի էին
հետաքրքրում նրան, քան հովտապետի հարց ու
փորձը:

—Դու չը գնացիր համբուրելու, կրկնեց հո-
վտապետը այժմ բաւական բարկացած կերպով,
—ուրեմն դու վրացու Աստուածը, վրացու Յի-
սուս Գրիստոսը, վրացու Խաչն ու Աւետարանը
չես ընդունում:

Վերջին հարցերը շարժեցին պատանու ծիծաղը:

—Ընդունում եմ, պատասխանեց նա:—վրացու
Աստուածը, Յիսուս Գրիստոսը, Խաչն ու Աւե-
տարանը, մի և նոյնն է, ինչ որ հայերինն է:

—Ի՞նչպէս թէ մի և նոյնն է. վրացու Աստուա-
ծը ուրիշ է, հայինը ուրիշ է. վրացու Գրիստոսը
ուրիշ է, հայինը ուրիշ է:

Ներով: Պակասութիւն չը կար և քաղցրաւէնի-
քի ու պտուղների մէջ. ամենայն բան պատրաս-
տած էր առատութեամբ:—Հինգ հարկերից աւե-
լի էր հիւրերի թիւը. յայտնի բան է մեծ մա-
սամբ օրիորդներ և տիկնայք: Պարահանդէսին
ներկայ էր և Մոսկվայի նահանգի ուսումնարան-
ների հոգաբարձու կ ո մ ա կ ա պ ն ի ս տ:

Ժամը երկուսին գիշերուայ հիւրերը չնորհա-
կալ եղան ճեմարանի վերատեսչին և տեսչին և
թաղին պարահանդէսը, տանելով իրանց հետ ու-
րախ երեկոյի քաղցր յիշատակը:

Յանկայի էր, որ տարին գոնէ 2 անգամ լի-
նէր այսպիսի երեկոյ, ուր աշակերտների հետ մի-
ասին՝ հասարակութիւնն էլ մեծ բաւականու-
թիւն է ստանում: Փ ո խ ա ղ ա ր ճ ա ղ ղ և-
ց ու թ ի լ լ ու ու ս ու մ ա ր ա ն ի և ը ն տ ա-
ն ի ք ի—ա հ ա ի ն չ ա լ է տ ք է լ ի ն ի դ ա ս-
տ ի ա ր ա կ ու թ և ա ն կ ա ր և ո Ր ա ղ ո յ ն
խ ն ղ ի ը ն ե Ր ի ջ մ է կ ը՝ յօգուտ նոյն իսկ
դաստիարակութեան գործին:

Հիւրերից մէկը

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Թիֆլիս, 10 մարտի

Մի քանի յարգելի պատճառներից ստիպված
այլ ես չը կարողացայ ես շարունակել «Ման-
կավարժական թերթ» ամսագրի հրատարակու-
թիւնը: Աւելորդ համարելով կրկին այստեղ այդ
ամսագրի նպատակը և նշանակութիւնը, որը
պարզ երևեցաւ նրա ամբողջ մէկ տարվայ
հրատարակութեան մէջ, կասեմ միայն՝ որ ինձ
համար այդ հրատարակութիւնը այլ ես անկարելի
եղաւ այն օրից, երբ ես հրաժարվեցայ ուսում-
նարանական գործունէութեան ասպարիզից, այն
է թեմական վերատեսչութիւնից: Յետոյ էի, որ
մեր ուսումնական երիտասարդներից ոմանք,
որոնք այժմ գործում են մանկավարժութեան
ասպարիզում, շարունակող լինէին ամսագրիս,

—Վրացու Աստուածը վրացի է, հայինը հայ է,
նրա խօսքը կտրեց պատանին ծիծաղելով:

—Ապա, ի՞նչ ես կարծում. դուրստ այսպէս է,
ասաց հովտապետը, զարմանալով պատանու լաւ-
բանասիրութեան վրա:—վրացու Աստուածը վրա-
ցի է, հայինը հայ է. եթէ չես հաւատում, գնա
մեր տեղերից հարցրու, նա էլ այդպէս կասի:

—Գիտեմ, որ նա էլ այդպէս կասի... պատաս-
խանեց պատանին, աշխատելով վերջ տալ հո-
վուի աստուածաբանական քննութիւններին, ո-
րովհետեւ նրա ուշադրութիւնը դարձաւ այդ բո-
ւէում ղէպի ձորը, որտեղից անց էին կենում
մի խումբ աղջիկներ: Նա վեր կացաւ:

—Ո՞ւր ես գնում, հարցրեց հովտապետը:
—Գնում եմ համբուրելու... ասաց պատանին
ժպտելով, և աչքի տակով հետեւելով աղջիկների
խումբին:

Հովտապետը հալած իւղի տեղ ընդունելով
պատանու խօսքը, և չը հասկանալով նրա երկ-
դիմի իմաստը, կարծեց, թէ իրան արդէն յաջող-
վեցաւ վրացու հաւատքի բերել իր անհատ
օգնականին, և Ֆանատիկոսի ուրախութեամբ
գրկելով նրան, ասաց.

—Գնա, դաւաւր, գնա համբուրել, ես այստեղ
ոչնաւորները կը պահեմ. թէ փող չունես, փող էլ
կը տամ քեզ. մի դոյզ մօմ առ, վարիւր սեղանի
վրա:

Այս ասելով, հովտապետը հանեց իր մախա-
ղի միջից մի քանի սև փող և տուեց պատանուն:
Դաւիթը չնորհալուութեամբ ընդունեց փողը և
գիմեց ղէպի մատուռը: Անցնելով ձորը, նա
զուրս եկաւ նեղ ճանապարհի վրա, որ տանում
էր ղէպի ուղտատուղը: Ճանապարհի վրա ոչ ոք
չը կար. նա տեսաւ մի գոսացած մուրացկան, որ
ծնկներին ու ձեռքերին վրա սողալով, քարէ էր
գալիս ղէպի ուղտատուրները:

—Ո՞ր կողմից, եղբայր, հարցրեց նրանից պա-
տանին:

և այդ իսկ յոյսի պատճառով, ես բաժանորդա-
գրութիւնը շարունակեցի և երկրորդ տարվայ
համար: Այդպէս իսկ պատահեցաւ. պ. Անդրակ
Մանդինեանը՝ Շուշու հողերը ուսումնարանի
տեսուչ նշանակվելով, յայտնեց ինձ իր ցան-
կութիւնը շարունակել երկրորդ տարին «Ման-
կավարժական թերթ», խոստանալով սրա մա-
սին իր վերջնական համաձայնութիւնը Շուշուց
գրել ինձ նամակով, բայց զգալիաբար մինչև
այսօր ոչինչ անդեկութիւն չունեմ նրանից ըս-
տացած: Այս մէկ պատճառը, որ ինձ ստիպեց
պահել մօտ բաժանորդագրերը: Երկրորդ պատ-
ճառն այն էր, որ ես մտադիր էի, եթէ «Ման-
կավարժական թերթ» հրատարակութիւնը չը
յաջողվի, այն ժամանակ առանձին գրքոյկներ
հրատարակել գրականական և մանկավարժական
բովանդակութեամբ, ի նկատի ունենալով մեր
ձեռքի տակ եղած նիւթերի առատութիւնը և
այդպիսով պ. պ. բաժանորդներս՝ «Մանկավար-
ժական թերթ» տեղը ստանալին այդ հրատա-
րակութիւնը, եթէ միայն ի հարկէ ցանկանային:

Այս ես պէտք է ասած, որ այն բաժանորդ-
ները, որոնք դիմել են ինձ, անմիջապէս և ան-
յապաղ յետ են ստացել իրանց բաժանորդա-
գները: Ախպրայի բաժանորդների փողերը
մենք մի օր առաջ ուղարկած էինք արդէն, երբ
«Մշակ» մէջ հրատարակեցաւ: Ախպրայից
նամակը դրա մասին:

Այժմ մեզ մօտ մնում է շատ սակաւ: Շատերի
հասցէները մենք չը գիտենք, որոնց կարողա-
նայինք ուղղակի հասցնել փողերը, սրա համար
խմբահարար կը խնդրեմ այն պարոններին,
որոնք գրվել են բաժանորդ «Մանկավարժական
թերթ» և երկրորդ տարուայ համար, բարեհաճեն
դիմել նամակով կամ անձամբ ինձ և անյապաղ
կը տառնան իրանց դրամները ամբողջապէս:
(Հասցէ՝ Тифлисъ, Якову Григорьевичу Тер-
Иоаннисяну, Сололаки, Фрейлинская ул.,
д. Мирзоева.)—

—Քաղաքից, պատասխանեց մուրացկանը և
շարունակեց սողալ:

—Ի՞նչու այսպէս ուշ, հարցրեց պատանին,
ստատիկ խղճահարութեամբ:

—Այդ ոտներով շատ հեռուն չես գնայ, ա-
սաց մուրացկանը, ցոյց տալով տախտակից
չխլված հողաքանակները, որ հագել էր ձեռքերի
թափերի վրա:

Պատանին ձգեց նրան հովտապետից ստացած
սև փողերը և հեռացաւ: Նա դուրս եկաւ ղէպի
մատուռը տանող նեղ ճանապարհից և մտաւ այն
ձորի մէջ, որ կողմից մի քանի բողբոջ ան-
ցաւ աղջիկների խումբը: Նրանք շատ չէին հե-
ռացել. ամեն մի ծաղիկ, ամեն մի թիթեռնիկ,
ամեն մի վտակ իր պաշտօն, ուրախածայն հո-
սանքով գրաւում էր, հրապուրում էր, նրանց իր
մօտ էր կանչում: Պատանին այժմ այնքան մօ-
տացել էր, որ կարողանում էր հեռուից ձանա-
չել նրանց. թամբը Սալամէ՛ հետ առանձ-
նացած, գնում էին բոլորովին բաժանված ամ-
բողջ խմբից: Պատանին, կարծես, լսում էր նը-
րանց ձայնը և հասկանում էր նրանց խորհրդա-
ւոր քրթմնջոցը: Բայց իսկապէս նա ոչինչ չէր
լսում. միայն նրա սրտում խօսում էր թամբի
սէրը: Նա մտաւ թուփերի մէջ, որ չը նկատվի
Սիկոն մի կողմից կամաց-կամաց հետեւել նրանց:
Խիտ մացառների միջով անցքը բաւական
զգուշաւոր էր: Նա չէր նկատում, թէ, որպէս
պատասխատւում էր իր հաղուստը. նա չէր զգում,
թէ որպէս թփերի փշառ ոտները զարկվում էին
իր երեսին: Նա երջանիկ էր և գոհ, որ գոնէ
հեռուից տեսնում է թամբին:

Աղջիկներին խումբը դիմում էր ղէպի կուրի
ափը. այդ ձորը տանում էր ուղիղ ղէպի գետի
կողմը: Նրանք ցանկանում էին նայել յորդա-
ցած գետի վրա, ցանկանում էին տեսնել, թէ
որքան բարձրացել է այս տարի կուրը: Ի՞նչ
զուարճութիւն էին գտնում հեղեղատի պըղ-

Այստեղեւտե մեծում է ինձ խորին շնորհակալութիւնս յայնքան աչք տրեւանց և պարտնեւրին, որոնք միշտ համակրել են «Մանկավարժական թերթին»։ Շատ ցաւում եմ, որ մի քանի համագործակցներ արգելք եղան ինձ շարունակելու մշակութիւնս ուսումնարանական հոգի վրա, բայց և այնպէս չեմ մնում առանց յոյսի, որ մի օր դարձեալ աշխատելու եմ գցել իմ լուսնա ազգային գանձարանը։

Յակոբ Տէր-Յովհաննիսեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Русск. Куперб» լրագրում կարդում ենք հետեւեալ հեռագիրը Ս. Պետերբուրգից։ «Ասում են որ կոմս Լորիս-Մելիքով նախագոյնացնում էր հանդուրեալ թաղաւորին չը գնալ մարտի 1-ին զինատաղ, ի նկատի ունենալով վտանգի մասին տարածված լուրերը։»

«St. Petersburg. Herald» լրագրում կարդում ենք որ թագաւոր Կայսր Ալեքսանդր Ալեքսանդրովիչ մարտի 3-ին պալատի մէջ ընդունելութեան ժամանակ ասեց։ «Ես ընդունում եմ դահը հաստատ վճարելով աշխատել հետեւ իմ Հօրը և աւարտել այն գործը, որ Նա է սկսել։ Եթէ Աստուծո չհամանով ինձ էլ նշանակվէր նոյն վիճակը, ինչպէս Նրան, այն ժամանակ Նա յոյս ունեւ դուք նոյնքան հաւատարմ կը լինէք դէպի իմ Որդին, որքան հաւատարմ էիք դէպի իմ Հայրս։»

Հանգուցեալ թաղաւորի թաղման հանդիսին, ինչպէս հաղորդում են Ս. Պետերբուրգի լրագիրները, գալու են Գերմանիայի թաղապետանդը, Բոլգարիայի իշխան Ալեքսանդր Լ. Ռէլսի իշխանը և Շվեյցրի թաղապետանդը։

«Новое Время» լրագիրը հաղորդում է որ մարտի 3-ին այսպէս անձինք կայրին Ս. Պետերբուրգի համալսարանի պատերի վրա տպված պրոկլամացիա, որի մէջ յայտարարվում էր թագաւորի մահվան մասին և սպառնալիքներ էին յայտնվում այժմեան Կայսրին։ Ուսանողները վրդովված այդ յանդիմութենից, գլխիցին պատից այդ պրոկլամացիա և կտոր կտոր արին այդ թուղթը։

Մարտի 1-ի եղեւնագործութեան ժամանակ վերաւորված են եղել 18 անձինք, որոնցից երկուսը արդէն մեռել են. սրանք են՝ մի կաղակ, և մի անյայտ անձնաւորութիւն։ Վերաւորվածների թուում կայ մի կին, մի երեխայ և մի ֆրանսիացի երաժշտութեան վարժապետ, որոնք փոքրոքում փնջում էին։ Գնդակաւոր Գլխիցիի նոյնպէս վերաւորված է։ Մի ոտիկան կորցրել է աչքը և ծանր կերպով վերաւորված է։ Բոլոր

տուր ակիքներն մէջ։ Պատանին, չը դուրս գալով իր դարանից, շարունակում էր հետեւել նրանց։

Այդ միջոցին մատուռի մօտ արդէն սկսվում էին մրցութիւնները։ Բազմութիւնը հաւաքվել էր մի հարթ տախտակի վրա։ Գուրս էին բերել մեծ պարոնի և Արչիլ թաւաղի որդու խոյրը։

—Յիտ քաչվեցէք, յիտ քաչվեցէք, ձայն էին տալիս բազմութեանը։

Բազմութիւնը յիտ քաչվեցաւ և հարթ տախտակի վրա բազմեցաւ հրապարակի նման մի տեղ։ Նրա միջնավայրում կանգնեցին էին երկու խոյրը միմեանցից փոքր ինչ հեռու։ Ազնուականները չըջապատել էին նրանց։ Բազմութիւնը հեռուց նայում էր։ Խոյրերի աչքերը դեռ կապված էին։ Մտանքները բաց արին նրանց աչքերը, և երկու ախոյեանները խիստ տեսնելով միմեանց, արձակեցին մի խուռ, որոտածայն մըռնչիւն։ Մեծ պարոնը կանգնած էր իր խոյր կողմում, իսկ Արչիլ թաւաղի որդին կանգնած էր իր խոյր կողմում։ Նրանք, չը վստահանալով ծառաների հմուտութեան վրա, սկսեցին իրանք կարգադրութիւններ անել։ Խոյրերը անհանգիստ կերպով տատանվում էին, այս կողմ և այն կողմ էին յարձակվում, աշխատելով իրանց չըթանները կորել, որ պինդ բռնված էին ծառաների ձեռքերում, բայց չէին կարողանում։ Այդ արգելքը աւելի զարագացրեց նրանց։

—Ես մօտ եմ բերում, Արչիլ, ձայն տուեց մեծ պարոնը։

—Ես էլ մօտ կը բերեմ, պատասխանեց նա, — միայն կամաց-կամաց, չը թողնէք, որ յարձակում գործէ։

Իւրաքանչիւր կողմից խոյրերն սկսեցին կամաց-կամաց մօտ տանել, մինչև բոլորովին հասան միմեանց։ Երկու ախոյեանները նախ սկսեցին հոտուտել միմեանց, յետոյ մեծ պարոնի խոյր անցաւ

վերաւորվածները այլ և այլ հիւանդանոցներում են պահուած։

Լսւր տարածվեց որ պօլիցէյմէյստէր գնդակաւոր Գլխիցիին արդէն վախճանվել է ստացած վէրքերից, բայց լրագիրները հերքում են այդ լուրը։ Նա փոքր առ փոքր լաւանում է։

Լրագիրները հաղորդում են, որ եղեւնագործութեան օրը Ս. Պետերբուրգի Վախճանի Ստարով քաղաքամասի փողոցներում տարածվեցան անյայտ ձեռքերով նիշխատական անթիւ պրոկլամացիաներ, որոնք վերաբերվում էին կատարված անցքին։

Ստացանք թիֆլիսական Կազոր Առաքելեան եղիազարեանցից նրա տարեկան վճարը յօդուտ «Միացեալ» ընկերութեան 30 ռուբլ, որ պարոնը ամեն տարի մարտի 7-ին նուիրում է իր որդու ծննդեան յիշատակին։

Ստացանք Բաթումից, հետեւեալ անձինքներից 8 ռուբլ, յօդուտ Հայաստանի սովատանջների կոստանտին քանանայ Տէր-Ստեփանեանց 1 ռ., Ստեփան Գովաթեզեանց 3 ռ., Տրդատ Նալաբեանց 3 ռ., Յովհաննէս Ալիբեզեանց 1 ռուբլ, Ընդամենը 8 ռուբլ։

Ուսու լրագիրները հաղորդում են, որ տպագրական օրէնքները վերաբնող յանձնադուրը մշակել է տպագրական նոր օրէնքների գլխաւոր սկզբունքները։ Այժմ յանձնադուրով նախագահ նշանակված է կոմս Վալուելով։

Լրագիրները հաղորդում են որ արտաքին գործերի միջնորդութիւնը պահանջել է ուսու դեսպանից Կ. Պոլսի մէջ և ուսու հիւպատոսներից Թիւրքիայում ձեռք տեղեկութիւններ ներկայացնել Միջազգային յայտնված ժամտախտի մասին, որպէս զի կառավարութիւնը կարողանայ դրական միջոցներ գիտն փոքր-Ասիայից ուսու տանձանները ժամտախտի անցնելուն առաջն առնելու համար։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Լրագիրների մէջ կարդում ենք հետեւեալ տեղեկութիւնները։ Հեռագիրը հաղորդեց, որ Ֆրանսիական կառավարութիւնը իր պաշտօնական լրագրի մէջ մի հրաման է հրատարակել, որից երեւում է, թէ Ֆրանսիական կառավարութիւնը մի փոխառութիւն է անում ահադին գումարի։ Ամենքը

Արչիլի խոյրի գաւակի կողմը վերջին անպատուութիւն համարելով այդ խիստ չուռ եկաւ և իր եղջիւրով խթեց նրա կողքը։ Այդ սաստիկ կատաղեցրեց մեծ պարոնի խոյրին, որ նոյն կերպով պատասխանեց նրան։

—Այժմ յիտ քաչեցէք, ձայն տուեց մեծ պարոնը, ինքը բռնելով իր խոյր չըթանից և մի քանի քայլ հեռացնելով։

Արչիլը նոյնպէս յիտ տարաւ իր խոյրին։ Երկու ախոյեանները կանգնած էին միմեանց հանդէպ, տանք քայլ հեռաւորութեան վրա։ Նրանք այն սաստիկան զարագացն էին, որ այժմ կարելի էր նրանց չըթանները բաց անել, ազատ թողնել, որ յարձակուներ գործէին։

Առաջին յարձակումը թուէր։ Նրանից յետոյ իրանք խոյրերը յիտ-յիտ քաչվեցան, և ուսուրի արարութեամբ վազելով միմեանց վրա, գլուխ գլխի և եղջիւր եղջիւրի զարկեցին։ Չորս կողմից լավում էին քաջաւորական ձայներ։ — Այ, զօշադ, այ, զօշադ, ստում էր մեծ պարոնը իր խոյրին։ Նոյն իրախոյսներով ոգեւորում էր Արչիլը իր խոյրին։

Խոյրերը կրկին յիտ-յիտ քաչվեցան, և այժմ աւելի լայն տարածութեան վրա կանգնելով, կրկին մի աւելի սաստիկ յարձակում գործեցին, ճակատ ճակատի զարկելով։ Եթէ քաղ լինէր նրանց զուգնների փոխարեն, կարող էր խիստ փշրվել, բայց նրանք, կարծես, ամենին ցաւ չը զգալով, շուտով բաժանվեցան նոր յարձակում գործելու համար։

—Մերը կը յաղթէ, ասաց տիրուհին մեծ պարոնին։ —Արչիլի խոյր այս անգամ փոքր էր մընում, որ պիտի ցած գլուխը։

—Այդ ձեռք աչքերին այնպէս երեաց, տիրուհին, պատասխանեց Արչիլը, որ աւելի էր կատարած, քան թէ իր խոյրը։ —շուտով կը տեսնենք, թէ որը կը յաղթէ։

Այդ միջոցին խոյրեր կատարեցին երրորդ յար-

ճակատացած են, որ Ֆրանսիական այդ նոր գործը կատարելապէս կաջողվի, որովհետեւ պարտք առած գումարը պէտք է ծախսվի հանրաօգուտ և արդիւնաբերական ձեռնարկութիւնների համար և որովհետեւ երկրի ապագայ պարտատէրերը մեծ արտօնութիւններ և օգուտներ են ստանում։ Պարտք արած գումարի մի մասը, ինչպէս երեւում է, պէտք է ծածկի արտաքայ կարգի ծախսերը երկրի պատերազմական ոյժերը կատարելապէս վերականգնելու համար, իսկ միւս մասը գործ կը դրվի հասարակական աշխատանքների համար։ Գերմանական լրագիրները այդ առիթով նկատում են, որ նրանք կարող էին համակրել Ֆրանսիայի բարօրութեանը, եթէ նրա պատերազմական ծախսերը չը բեռնաւորէին գերմանացի հարկատուներին, որոնք դարձեալ պիտի վճարեն նոյնպիսի ծախսերի համար։

Ֆրանսիական սենատը մի մասնաժողով ընտրեց, որ պէտք է քննէ պատգամաւորների ժողովից ընդունած տպագրական նոր օրէնքները։ Մասնաժողովի բոլոր անդամները նոր օրէնքի կողմնակիցներ են։

Անգլիական պահպանողական կուսակցութիւնը, որ նորերումն դատապարտում էր պարլամենտի մէջ Գլադստօնի քաղաքականութիւնը Անգլիականների վերաբերութեամբ, այժմ մտադրել է համայնքների ժողովի մէջ բարձրացնել Կանդաւարի խնդիրը։ Յուսմով իրանդական կուսակցութեան պաշտպանութեան վրա, պահպանողականները կարծում են, որ ժողովը նշանաւոր փոքրամասնութիւնից պաշտպանած նրանց առաջարկութիւնը աւելի մեծ նշանակութիւն կը տայ պարլամենտի վճռին։ Ազատամիտ կուսակցութիւնը արհամարհանքով է վերաբերում այդ հաշիւներին և լորդերի վճռին։ «Daily News» լրագիրը լորդերին համեմատում է թիւրք փաշաների հետ, որոնք ունին համեմատելի չուռն ժողովուրդի հետ։

Բոսնիների հետ զինադադար կայացնելու

ձախուժ և այնուհետեւ նաղդաները (*) սկսեցին աւելի արագ և շուտ-շուտ կրկնվել։ Բայց երկու անասուններն ևս դեռ մնում էին անպարտելի։ Նրանք այժմ աւելի հեռանում էին միմեանցից, որպէս զի իրանց յարձակման թափը աւելի ուժգին, աւելի սաստիկ և աւելի սարսափելի լինի։

Բայց բազմութեան ուշադրութիւնը այժմ դարձաւ դէպի մի ուրիշ կողմ։ Գետի եղբրեցի լսելի եղան խառնածայն աղաղակներ, չիւղղվեցաւ... խեղդվեցաւ... գոչում էին հեռուից։

—Ով էլ կողի, թող խեղդվի, իս պիտի վերջացնում կիւրի, ասաց մեծ պարոնը, նորից խըրախոյսներ տալով իր խոյրին։

Բազմութիւնը սկսեց վազել դէպի գետի կողմը։ Բայց ազնուականները դեռ չըջապատել էին խոյրերին և անհամբերութեամբ սպասում էին կուրի վախճանին։

«Խեղդվեցաւ... Թամարը խեղդվեցաւ... այժմ սկսեց պարզ լսելի լինել։

—Վայ, սե հագնեմ... Թամարը... գոչեց ատիրուհին, վազ տալով դէպի գետի կողմը։

Մի քանի քայլ հեռանալով, նրա ծնկները թուլացան և ընկաւ գետին վրա։ Բոլոր տիկինները, նրան նոյն դրութեան մէջ թողնելով, չը տապիցին դէպի գետեղբը։ Այժմ մեծ պարոնը էլ Արչիլը ու միւս ազնուականներին հետ փութացին օգնութեան հասնելու։

Գետը կատաղած էր։ Հարեւաւոր մերկ մարդիկ լողում էին պղտոր ալիքների մէջ և որոնում էին անբաղդ աղջկայ դիակը։ Ազնուականները ապշած, սարսափած, չը գէտնել թէ ինչ պէտք էր անել։ Լեւան թաւաղի որդին երեխայի նման լաց էր լինում։ Թամարի խորթ մայրը անիծում էր «անգամին»։ Պատաւ իշխանուհին աղօթում էր։ Մեծ պարոնը իր ձեռքի զաւա-

*) Նա զգալի նշանակում է անասունների ճակատ ճակատի խիլը։

լուրը շատ լաւ տպաւորութիւն գործեց Անգլիայի մէջ։ Ամենքը յոյս ունեն, որ զինադադարը խաղաղութեամբ կը վերջանայ։ Անգլիական կառավարութիւնը հրամայել է գեներալ Վուդին, որի սպանվելու լուրը սուտ յայտնվեցաւ, որքան կարելի է երկարացնել զինադադարը։ Ամենքը հաւատացած են, որ վերջի վերջոյ Անգլիան կը յաղթէ և որ պատերազմական գործողութիւնների շարունակելը անգլիական զենքի պատիւը պահպանելու համար բոլորովին սպարդին է։ Լօնդօնի մէջ հրատարակվող լրագիրների տեղեկութիւնների համեմատ, անգլիական միլիտարների խաբհուրդը մարտի 5-ին վրձու է վերադարձել Տրանսիլաւի անկախութիւնը բացի աֆրիկացիներով բնակեցրած մի քանի նահանգներից, որոնց վրա Անգլիան կամենում է պահել իր իշխանութիւնը։

ԱՄԵՐԻԿԱ

Մարտի 4-ին Միացեալ Նահանգների նորընտիր նախագահ Հարիզլի սկսեց իր պաշտօնավարութիւնը և այդ առիթով սենատի մէջ մի ծառ արտասանեց, որ Միացեալ Նահանգների իսկական նկարագիրն է։ Նա մի հայեացք գցեց Միացեալ Նահանգների առաջադիմութիւնների վրա նրանց գոյութեան հարեւրամեայ ժամանակամիջոցի ընթացքում։ Միացեալ Նահանգները այդ կարճ ժամանակամիջոցի մէջ կատարելապէս ապացուցին, որ կառավարչական բարձր իշխանութիւնը համարձակ կարելի է յանձնել ժողովուրդին։ Այժմ հիւսիսային Ամերիկայի բնակիչները մոռացել են բոլոր հին վէճերը, ապագայում մեծ գործեր կատարելու համար։ Յիշելով նեղրների ազատութեան գեղեցիկ հետեւանքները, Հարիզլի ասաց, որ նա բոլոր ջանքերով կաշխատի ապահովել նրանց օրէնքների և սահմանադրութեան պաշտպանութիւնը միւս քաղաքացիների հետ հաւասար։ Ամենից առաջ անհրաժեշտ է, որ նեղրները ընտրողական

զանով ծեծում էր գիւղացիներին, հայհոյանքներ էր արձակում, հրամայելով, որ շուրջ մըտնեն, թէ ևս առանց նրա հրամանին ևս հարեւաւոր մարդիկ ջրի մէջն էին։ Այնքան ազնուականներից միայն Արչիլը, ուշադրութիւն չը դարձնելով իր կողմ Միւսիայի աղաչանքին, մերկացաւ և նետվեցաւ գետի մէջ, գուցէ կարող լինէր ազատել խեղդվողին։

Թամարի հետ զբօսնող օրիորդներից մի քանիսը ուշաթափ էին եղած, և ընկել էին այստեղ ու այնտեղ, իսկ մի քանիսը, որ աւելի պինդ սիրտ ունէին, վազելով հասան ազնուականների մօտ, և արտասուք աչքերում պատմում էին, թէ որտեղից և ինչպէս նա ընկաւ գետը։ Բոլորը շուտաւրժ լուում էին։ Ափերից բազմութիւնը գոռում, գոչում էր, ձայն էր տալիս լուրորդներին, հասկանցելով, թէ գետի որ կողմերում պէտք էր որոնել։ Ոմանք ջրասուղ չների նման սկում էին, ջրի տակն էին մտնում, ոմանք տարվում էին սրնթաց հասարքի հետ։

Այդ ընդհանուր ստիւմի և իրարանցման ընթացքում, մեծ եղաւ բոլորի դարմացքը, երբ տեսան մի լուրորդ, ջրի տակից դուրս գալով, իր հետ բերում էր մի դիակ։ Նա մի ձեռքով կոհակներէ հետ կուռելով, միւսով բռնած ունէր դիակը, աշխատում էր մօտենալ ափին։ Այդ միջոցին ակիքների մի նոր յարձակում, ուժգին վրա տալով, երկուսին էլ տարաւ դէպի յատակը։ Մի քանի վայրկեանից յետոյ կրկին յայտնվեցաւ նա ջրի երեսին, դիակը բռնած ունելով ձեռքին։ Ամեն կողմից լսելի եղան ցնուութեան աղաղակներ։ Միւս լուրորդները շուտապէս նրան օգնութեան հասնել։ Բայց մինչև նրանց հասնելը, նա դուրս եկաւ ափի մօտ և անչնչացած մարմինը դրեց ցամաքի վրա։

—Կեցցէ՛ Գաւթիլը, կեցցէ... գոռաց ամբողջ բազմութիւնը։

(Կը շարունակուի)

նոյն իրաւունքները ունենան, ինչ որ սպիտակեղէն ունենալու Պէտք է միջոցներ գործադրել, որ ընտրութիւնները ժամանակ խաբէրայութիւններ չը լինեն: Նախագահը առանձին ուշադրութիւն դարձրեց կրթութիւնը տարածելու անհրաժեշտութեան վրա: Վերջին վիճակագրութեանց երեւաց, որ ընտրողները և նրանց երեսանների տգիտութիւնը աւելացել է: Այժմ այդպէս շարունակվի, հանրապետութեան անկումը անփախչելի կը դառնայ: Այժմեան սերունդը պէտք է կրթէ ապագայ սերունդին, որպէս զի նրանք ընդունակ լինեն իրանց կառավարել: Այս բարերար գործը կատարելու ժամանակ պէտք է մոռանալ կուսակցութիւնները և ցեղերը զանազանութիւնը: Առեւտրի մասին խօսելով, Հարֆիլդ ասաց, որ երկրի այժմեան բարօրութիւնը օրինակելի է: Այդ հանգամանքը մեկնվում է նրանով, որ հունձերը առատ են եղել և պետութեան կրեդիտը մեծ է: Նախագահը խոստացաւ, որ իր կառավարութեան ժամանակ նա կաշխատի ֆինանսական ամեն տեսակ ֆեյսանների առաջն առնել: Նրկրագործական շահերի վրա պէտք է աւելի մեծ ուշադրութիւն դարձնել: Այնուհետեւ Հարֆիլդ ասաց, որ անհրաժեշտ են մի քանի վերանորոգութիւններ և խնդրեց պատգամաւորներին պաշտպանել նոր կառավարութեանը:

ԳԵՐՄԱՆԻԱ

Արագիւնների մէջ կարգում ենք հետեւեալ տեղեկութիւնները: Գերմանական ներքին գործերի մինիստր կոմս Եյլներուդ վերջապէս ստացաւ իր խնդրած հրաժարականը: Իշխան Բիսմարկ աղապից այն մարդուց, որ իրան թոյլ էր տալիս մինիստրներ խորհուրդի մէջ յայտնել իր կարծիքները, որ իրան մինիստր էր համարում և ոչ թէ պետական կանցլէրի ծառայ: Իշխան Բիսմարկի կամայականութեանը չափ չը կայ: Նա ուշադրութիւն չէ դարձնում ոչ մինիստրների վրա, ոչ գերմանական սահմանադրութեան և ժողովների վրա: Նա բացարձակ յայտնում է իր հակասահմանադրական կարծիքները, այնպէս որ քաղաքականութեամբ զբաղվող գերմանացիները ելք չեն գտնում այդ ծանր դրութեանից:

Բիսմարկի այդպիսի կամայական քաղաքականութիւնը անտարբեր դարձրեց գերմանական պարլամենտին, որի դրութիւնը կատարելապէս անտանելի է: Ազգային ժողովների օրէնսդրական գործունէութիւնը դադարել է: Օրէնսդրական ժողովների ամենաաշխատասէր անդամները թողել են իրանց գործերը, տեսնելով, որ իրանց աշխատանքը ապարդիւն է անցնում, քանի որ Բիսմարկ առանձին կերպով նայում է երկրի սահմանադրութեան վրա: Պարլամենտի հրատարակած օրէնքները, որոնց նա տարիներով մշակել է, մերժվում են Բիսմարկի արտասանած մի ճառով: Նախկին օրէնսդրական ժողովներից մերժված կառավարչական օրինադիւնները նորից առաջարկվում են պարլամենտի քննութեանը: Նրեք տարի առաջ Բիսմարկ յայտնում էր, որ առանց տարլամենտական նշանաւոր մեծամասնութեան նա անկարող է կառավարել երկիրը, իսկ այժմ նա մի աստիճանաւոր է դառնում, որ կառավարում է իր ցանկութիւնները և հայեացքների համեմատ: Այդ է պատճառը, որ գերմանական քաղաքագէտները անհանգստութեամբ են նայում ապագայի վրա և դա չափազանց ծանր է դար-

ձնում Գերմանիայի քաղաքական դրութիւնը, որովհետեւ երկրի վիճակը այժմ կանխած է մի մարդու կամքից, որ չը նայելով իր ընդունակութիւններին, կարող է անուղղել սխալներ գործել:

ՖՐԱՆՍԻԱ

Պատգամաւորներին ընտրելու նոր ձևի հարցը Ֆրանսիայի մէջ առիթ տուեց պատգամաւորների ժողովի արմատական կուսակցութեանը հարց բարձրացնել Ֆրանսիական սահմանադրութիւնը վերաքննելու մասին: Լիօնի պատգամաւոր Բարոզէ այդպիսի մի առաջարկութիւն ներկայացրեց պատգամաւորների ժողովին, որ ստորագրված է արմատական կուսակցութեան 30 անդամներից: Այդ կուսակցութիւնը կամենում է փոփոխել սահմանադրութիւնը իր ուղղութեան համեմատ: Բարոզէ և նրա կուսակցիները կարծում են, որ այժմեան սահմանադրութիւնը բաւականաչափ ժողովրդական չէ: Բացի այդ հարց է բարձրացվում նոյնպէս և Ֆրանսիական սենատի մասին: Արագիւնները այն կարծիքի են, որ այդ առաջարկութիւնը չի աջողվի և եթէ նա ընդունվի պատգամաւորների ժողովից, սենատը անշուշտ կը մերժի նրան: Այդ խնդրի դէմ ձայն կը տան բոլոր կուսակցութիւնները բացի արմատականներից:

Ֆրանսիայի խաղաղասիրական տրամադրութիւնը, որ յայտնվեցաւ պատգամաւորների ժողովի մէջ եղած վիճաբանութիւնների ժամանակ, առիթ է տուել «Republique Française» լրագրին հետեւեալ դատողութիւններն անել: Պատգամաւորների ժողովը կատարելապէս իրաւացի է, գործելով երկրի ցանկութեան համեմատ: Նա ղիտէ, թէ Ֆրանսիական ժողովուրդը ինքը կամենում է անօրինել իր արկւնը և զբաղւել երբեք հաւանութիւն չի տալ այնպիսի մի քաղաքականութեան, որ Ֆրանսիային կը ձգի անօգուտ և վտանգաւոր ձեռնարկութիւնների մէջ: Ահա այսպէս է նայում երկիրը խաղաղութեան և պատերազմի հարցին, որի պատճառով կուսակցութիւնները աղմուկ են բարձրացնում արհեստական ցոյցեր անելու համար: Հանրապետական Ֆրանսիան պատերազմը երբեք իր վերջնական նպատակը չէ համարել և նրան չէ մտքել իր պրոգրամի մէջ: Ժողովրդական կառավարութիւնը պէտք է պահպանի խաղաղութիւնը և պաշտպանի մեր աշխատասէր և խնայող ժողովուրդը պատերազմի պատահարներից: Այս բոլորը ճշմարտութիւն է, որի հետ համաձայն է պատգամաւորների ժողովը: Քանի որ զոյգութիւն ունեն Ֆրանսիայի այժմեան հիմնարկութիւնները ոչ թէ միայն պատերազմին է անկարելի, այլ և որ և է վտանգաւոր ձեռնարկութիւն:

ԻՏԱԼԻԱ

Հռոմից հաղորդում են հետեւեալ տեղեկութիւնները իսկիա կղզու վրա պատահած երկրաշարժի մասին: Իսկիան զանազան է նէպոլից ոչ հեռու: Նրկրաշարժը բոլորովին քանդեց Կազամիչիօյա անունով ված տեղը, որտեղ հաւաքվում էին ծովի մէջ լողանալու համար: Նրկրաշարժի հաւանութեանը այնքան ուժեղ էին, որ նրանք քանդում էին ամբողջ շինութիւններ: Փողոցների մէջ ահապաղեալ ձեռքեր էին կազմվում: Բնակիչները սարսափած դուրս էին թափվում տներից, բղաւում էին և փրկուում էին իրանց բարեկամներին: Կղզու գործերը իսկոյն ուղեւորվեցան օտարահաւաններին բնակվելու տեղը: Զինուորները

աւերակների տակից կիսակենդան մարդիկ էին հանում: Նրանք ստիպված էին ընդգիստարկ սարսափած կանանց, որոնք չէին թող տալիս վիրաւորվածներին հիւանդանոցը տեղափոխել: Վիշերը աշխատանքները դադարեցրին մինչև հասաւ նէպոլից մի խմբակ, որ ջահերի լուսով շարունակում էր աշխատել: Մինչև առաւօտ աւերակների տակից 50-ից աւելի դիակներ հանվեցան: Զերեկով ծովի ափին ստուերներին նման թափառում էին ամեն բանից զրկված բնակիչները: Մաքսատան մէջ դիակների կոյտեր էին հաւաքված: Վիրաւորվածները տեղափոխվում էին նէպոլի հիւանդանոցները: Բնակիչներից շատերը երկրկոյց խելագարվել են: Կառավարութեան հրամանն էր համեմատ ֆուսիվաներին դրամ է բաժանվում: Կազամիչիօյայի 400 բնակիչները զրկվեցան իրանց ամբողջ գոյքից և աղքատացած ֆուսիվաներից մէջ մեծ շփոթ էր տիրում: Մարտի 8-ին գտնված է 175 մեռած դիակներ, մոտ 100 մարդ դեռ գտնված չեն: Նէպոլի խմբագրութիւնների կողմը կարօտեալներին հաց է բաժանում: Մարտի 8-ին գիշերը մի նոր երկրաշարժ եղաւ, որ քանդեց ֆուսիվան շինութիւնները:

ԹԻԻՐԻԻԱ

Մէսինձըր լրագիրն իւր շարաթ և երկուշարթի աւուրց թիւերուն մէջ վանէն ստացած երկու նամակներ հրատարակած է, մին յունվար 17, միւսն յունվար 20 թուականաւ: Իրաց վիճակն, ըստ յիշեալ նամակաց, խիստ տխուր է Արձիշոյ, Շատախի, Մոկսի, Բաղէշի և Աշաշկերտի կողմերը: Նամակագիրն անուններ, թուականներ և այլ մանրամասնութիւններ տալով հարստահարական բազում դէպքեր կը յիշէ, որոց թարգմանութիւնը վանց ընկու կարեւոր պատճառներ ունիմք մեք: Թղթակիցը կըսէ թէ, եւրօպական համաձայնութեան անյաջողութեան շնորհիւ Հայաստանի եւրօպական հիւպատոսաց ազդեցութիւնն ոչինչ է այժմ տեղական իշխանութեան առջև, և կուզէ գիտնալ թէ «Հայաստանի խեղճ քրիստոնէից իրաւունքներն ո՞վ պիտի պաշտպանէ», և նմանօրինակ խօսքեր կընէ:

Յիշեալ թղթակցութեան մէջէն իբրեւ նոր ինչ հետեւեալ լուրը կընդօրինակեմք: Պարսիկ պատգամաւորութիւն մի հասաւ վան, բաղկացեալ աւստրիացի սպայէ մի Պ. Ֆոն Լայթնէր, Միլիթար Բիզա խանէն, որ Շահին թիկնապահն է, և Միլիթար Ալի խանէն, որ Կալիքէցի պարսիկ վաճառական մ'է: Սոցա կընկերանան բազմաթիւ Պարսիկ խաղաղներ: Սոցա պաշտօնն է Օսմ. կառավարութեան հետ բանակցել Շէյխ Ուսէյեթուլլահի ապստամբութեան վրայ: Կըսուի թէ այս պարսիկ պաշտօնակալը կը պահանջեն որ Շէյխը պարսկական իշխանութեանց յանձնուի և նորա պատճառաւ Պարսից կրած բոլոր ֆեյսաներն Օսմ. կառավարութեան վճարուին, և սահմանադրվին երկու կողմերուն վրայ խիստ հակողութիւնն էր զործ դնել տրամադրող դաշնագիր մ'ըստորագրուի: Շէյխ Ուսէյեթուլլահ յաւաքից գործնան համար մեծ պատրաստութիւններ կը տեսնէ, և շրջաբերականներ կը զրկէ բոլոր քուրդ գլխոց խրեան հետ միանալու հրաւիրելով գնոսա Շէյխին այս գաղտնի նամակներէն մի քանին ալ Օսմ. իշխանութեանց ձեռքն անցած են: Ջրոյց կայ թէ Նիստրականաց զուլա Մարտի մուն և այդ հասարակութեան 15 Միլիթներ Պարսից դէմ օգնութիւն խոստացեր են Շէյխին:

Այժմ ստուգուած իրողութիւն մ'է թէ

պարսկական կառավարութիւնը Շէյխ Ուսէյեթուլլահին պարսիկ իշխանութեանց յանձնումը պաշտօնապէս խնդրած է Բ. Կոնէն:

Մինչև անգամ, Կ. Պոլսոյ պարսկական դեսպան Մոհամմէ խան միւս դեսպաններէն խնդրած է պաշտօնապէս, որ Շէյխ Ուսէյեթուլլահի յանձնան խնդրոյն ոյժ տան Բ. Կրան քով:

(Մատիս)

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Русск. Курьеръ» լրագրում կարդում ենք Լոնդոնից ստացած մի հեռագիր, որով հաղորդվում է թէ Գլադստոն յանձնել է անգլիական պետական կանցլէրի գանձապետի պաշտօնը այժմեան Կ. Պոլսի դեսպան Գ. Եֆէնի:

Լրագիրները հաղորդում են որ Ֆրանսիական սենատը և պատգամաւորների ժողովը յայտնեցին ցաւակցութիւն Ռուսաստանին Կայսր Ալեքսանդր Նիկոլայեւի մահվան մասին: Մահվան լուրը ստանալու օրը սենատը և պատգամաւորների ժողովը միաձայն վճռեցին փակել իրանց այն օրվայ նիստերը:

Անգլիական լրագիրն և համայնքների ժողովը յայտնեցին ցաւակցութիւն ռուսաց Կայսրի մահվան առիթով:

Գերմանական լրագրատուի նախագահը ներկայացաւ Վիլհելմ Կայսրին և լրախոսադի կողմից յայտնեց Կայսրին ցաւակցութիւն նրա քրոջ որդու մահվան առիթով: Բերլինում նշանակված է սուգ երեք շաբաթ շարունակ: Բերլինի զօրանոցները ռուսաց Կայսրի մահվան առիթով զարդարվեցան սև դրօշակներով: Կայսրի թաղմանը ներկայ գտնվու համար կերթան Ս. Պետերբուրգ պատգամաւորները այն պրուսական գունդերի, որոնց չէֆը վանձնակալ Կայսրն է եղել:

Աւստրիական Կայսրը ինքն անձամբ գնացել է Վիեննայի ռուս դեսպանի մօտ, նրան իր ցաւակցութիւնը յայտնելու Ալեքսանդր Կայսրի մահվան առիթով: Աւստրիական լրախոսադի մէջ Բիզէր պատգամաւորը առաջարկեց յայտնել համակրութիւն և ցաւակցութիւն Ռուսաստանին, բայց լրախոսադը հրաժարվեց ընդունել Բիզէրի առաջարկութիւնը, յայտնելով որ իրանուրէր չունի խառնվել միջազգային գործերի մէջ: Լրախոսադի գերմանական կիստրոնական կուսակցութիւնը յայտնեց իր զայրացումը մարտի 1-ի եղեռնագործութեան առիթով:

Իտալական պարլամենտը յայտնեց իր ցաւակցութիւնը Ռուսաստանին և Կայսր Ալեքսանդր Ալեքսանդրովիչին:

Ֆրանսիական պատգամաւորների ժողովում, երբ Գամբետտա առաջարկեց փակել ժողովի նիստը ռուսաց Կայսրի մահվան առիթով, ծայրայեղ արմատական կուսակցութեան մի պատգամաւոր պահանջեց որ քուէարկվի փակելու հարցը: Գամբետտա պատասխանեց որ այդ տեսակի դիպլոմատներում անտակտութիւն կը լինէր քուէարկել հարցը, այլ պէտք է միաձայն փակել նիստը և որ Նապոլէօն III-ի կայսրութեան ժամանակ Ֆրանսիական օրէնդիր ժողովը մինչև անգամ փակեց իր նիստը անբրիկական հանրապետութեան նախագահ Լիոնօնի մահվան առիթով:

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԴԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՐԳ, 11 մարտի: Գատաւտանը Բիսակօվի և երեք միւս չարագործների վրա նշանակված է մարտի 18-ին: Գատաւպարտվածներին երէկ յանձնվեցաւ մեղադրական թուղթը: Հրաւիրված են 60 վկաներ, որոնցից 11 էկպերտներ են: Համարարանական դատաւարներ լինեց Կրօկամիցիւսներ տարածող ռուսաւորին հեռացնել երեք տարով համալսարանից, զրկելով նրան մի այլ համալսարան մտնելու իրաւունքից, իսկ միւս ռուսաւորին կայանաւորել եօթ օրով: Նրկուսն էլ դատաւարների էին նշանակված իրանց ընկերների խնդիրքի համեմատ: Ասում են, որ երէկ մի շատ նշանաւոր յանցաւոր է կայանաւորված:

Խմբագիր—հրատարակող ԳԻՐԳՈՐ ԱՐՔԻՐՈՒՆԻ

